

ՀԱՆՁԻՍ
ԲՐՇ. Տ. ՊԵՐՃ ՍՐԿ. ԹՈՐՈՍԵԱՆԻ

Հոկտեմբեր 13ին, 2009 վախճանեցաւ Սան Ֆրանսիսկոյի Սուրբ Յովհաննէս Հայց. Եկեղեցւոյ Սարկաւագներէն Բրշ. Տ. Պերճ Սրկ. Թորոսեան: Թաղման «Տան եւ Եկեղեցւոյ Կարգեր»ը կատարուեցան Սուրբ Յովհաննէս Հայց. եկեղեցւոյ մէջ՝ Ծուխին Հոգեւոր Հովիւ, Արժ. Տ. Տիրան Քհնյ. Աւագեանի եւ Սանթա Գլարա Հովիտի՝ Գուփըրթինոյի Սուրբ Անդրէաս Հայց. եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ, Արժ. Տ. Տաթեւ Յարութիւնեանի կողմէ: Այս փառաբանութեամբ Սրբապան Հայրը ցաւակցագիր մը ղրկեց իր այրի կնոջ՝ Տիկին Նուարդ Թորոսեանի, որուն մէջ կ'ըսէր.-

«Այսու մեր խորին ցաւակցութիւնները կը յայտնենք ձեզի, ձեր հարազատներուն, բարեկամներուն եւ բոլոր սգաւորներուն: Արդարեւ, հանգուցեալը փոքր փարիքէն սկսեալ Կ. Պոլսոյ մէջ իր ծնողներուն քրիստոնէական շունչով եւ մեր եկեղեցւոյ երանելի հայրերու աղօթքով ու նուիրումի ոգիով թրծուած էր եւ եկեղեցի յաճախելով իր մասնակցութիւնը կը բերէր արարողութեանց:

Ամերիկայի Միացեալ Նահանգներ փոխադրուելէ ետք, Արեւելեան Թեմէն ներս շարունակեց իր հոգեւոր ծառայութիւնը, ապա Սան Ֆրանսիսկո փոխադրուելով ամուսնութիւն կնքեց ձեզի հետ: Հանգուցեալը նուիրեալ, եկեղեցասէր, ազգասէր, հայրենասէր եւ բարեգործ անձնաւորութիւն մըն էր: Մեր կողմէ արժանացած էր Սարկաւագական Աստիճանին՝ նախանձախնդիր ըլլալով մեր Սուրբ Եկեղեցւոյ դարաւոր աւանդութիւններուն նկատմամբ: Պերճ Սարկաւագ միշտ պիտի յիշուի իր ծառայասիրութեան եւ ունեցած բարի հոգիի շնորհիւ:

Նախապէս փրուած որոշման համաձայն, 2010 թուի Յունուար 3ին իրեն փոխարէն ձեզի պիտի յանձնենք Առաջնորդարանի կողմէ շնորհուած «Հայ Ոգի» (Hye-Spirit) Շքանշանը: Թող Աստուած Իր երկնային լոյսերուն մէջ հանգչեցնէ ձեր սիրելի ամուսնոյն եւ Հայց. Եկեղեցւոյ համեստ սպասաւոր՝ Բրշ. Պերճ Սրկ. Թորոսեանի ապնիւ հոգին: Կ'աղօթենք, որ դուք եւ բոլոր հարազատներն ու սգակիրները մխիթարուիք Սուրբ Հոգիով:

«Յիշատակն արդարոց՝ օրհնութեամբ եղիցի»